# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## «ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
## փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ.( 374 10) 73 98 30, 28 06 69,
ֆաքս (374 10) 28 06 69, էլ. փոստ anpp@anpp.am

№ 40-300
"25" 03 2015թ.

«ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-11/7» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում
կատարելու
ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-11/7» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքը՝ շինանյութեր: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիրն է հանդիսանում «ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-11/7»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, կայանի վարչական շենք հասցեով, 3-րդ հարկ, N 311 սենյակ մինչև 2015թ. ապրիլի 06-ը, ժամը 11:00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Գայանե Ջեյնալյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն «ՀԱԷԿ» ՓԲԸ վարչական շենքում, ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, կայանի վարչական շենք հասցեով, 3-րդ հարկ, N 311 սենյակ 2015 թվականի ապրիլի 06-ին, ժամը 11:00-ին:

ՀՀ կառավարության 29.04.2004թ. թիվ 1008 որոշմամբ <ՀԱԷԿ> ՓԲԸ-ն համարվում է կարևորագույն օբյեկտ, և ընկերության հարակից տարածք մուտք գործելը իրականացվում է հսկիչ-անցագրային կետով: Հայտերը վերջնաժամկետին ներկայացնելու համար խնդրում ենք հաշվի առնել վերոգրյալ հանգամանքը և ժամանակին ստանալ անցման թույլտվություն:

Գնման առարկա է հանդիսանում «ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար շինանյութերի ձեռքբերումը:

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար՝ շինանյութերի մատակարարման (որը կազմված է 106 չափաբաժիններից) տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 1.1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (հավելված N5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (հավելված N5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ՀԱԷԿ-ՇՀԱՊՁԲ-11/7» ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրերի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

«ՀԱԷԿ» ՓԲԸ էլեկտրոնային փոստի հասցեն է՝ anpp@ anpp.am:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցմամբ)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Առդիր 17 էջ:

Գլխավոր տնօրենի ժ/Պ՝ [signature] Մ.Վարդանյան

Կատարող՝ Գ.Ջեյնալյան
Հեռ. 28-23-59